ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունվարի 2019թ. թիվ 19-Ա

«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊՓԲԸ-Ի ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի ԹԻՎ 6-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «իզ» կետի, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի տնօրենի 2018թ. դեկտեմբերի 20-ի թիվ 01/880 գրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հաստատել «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2018թ. հունվարի 12-ի «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ի բժշկական օգնության և սպասարկման վճարովի ծառայությունների գները հաստատելու մասին» թիվ 6-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. հունվարի 18
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2019թ. հունվարի 18-ի
թիվ 19-Ա որոշման

«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊՓԲԸ-Ի ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԵՐԸ

ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Հ/Հ	ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Չափի միավորը	Գինը /ՀՀ դրամ/
1.	Զենք կրելու համար հոգեկան վիճակը հավաստող տեղեկանքի տրամադրում	հատ	6000
2.	18-ից բարձր տարիքի անձանց հոգեկան վիճակը հավաստող տեղեկանքի տրամադրում	հատ	4000
3.	18-ից բարձր տարիքի անձանց հաշվառման վերաբերյալ տեղեկանքի տրամադրում 1 օրվա ընթացքում	հատ	1000
4.	Քաղվածք արխիվային փաստաթղթերից	հատ	3000
5.	Էլեկտրաէնցեֆալոգրաֆիա	հատ	6000
6.	Հոգեբույժի, նարկոլոգի խորհրդատվություն դիսպանսերի սպասարկման տարածքից դուրս (ք.Վանաձոր, Գուգարքի տարածաշրջան) առանց ուղեգրի՝ քաղաքացու նախաձեռնությամբ	այց	5000
7.	Հոգեբույժի, նարկոլոգի խորհրդատվություն տան պայմաններում (Վանաձորում)	այց	10000
8.	Հոգեբույժի, նարկոլոգի խորհրդատվություն տան պայմաններում (Վանաձորից դուրս)	այց	30000
9.	Հոգեբանի խորհրդատվություն	այց	5000
10.	Նարկոլոգիական հիվանդների կամավոր ամբուլատոր և պահպանողական բուժում, եթե անձը ՀՀ քաղաքացի չէ, կամ չի ներկայացնում ՀՀ քաղաքացիությունը հաստատող փաստաթուղթ	այց	10000
11.	Սթափության զննություն կազմակերպությունների կամ քաղաքացիների նախաձեռնությամբ	հատ	6000
12.	Ներկա հոգեկան վիճակի վերաբերյալ եզրակացություն տնային պայմաններում՝ հանձնաժողովային կարգով (Վանաձորում)	այց	25000
13.	Ներկա հոգեկան վիճակի վերաբերյալ եզրակացություն տնային պայմաններում՝ հանձնաժողովային կարգով (Վանաձորից դուրս)	այց	50000
14.	Արտահիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննություն քաղաքացիական գործերով՝ տնային	այց	30000

	պայմաններում (Վանաձորում)		
15.	Արտահիվանդանոցային դատահոգեբուժական փորձաքննություն քաղաքացիական գործերով՝ տնային պայմաններում (Վանաձորից դուրս)	այց	50000
16.	Նարկոլոգիական հիվանդանոցային բուժում ՀՀ քաղաքացի չհանդիսացող անձանց համար, 10-օրյա միանվագ մուծումով (յուրաքանչյուր օրը 15000 դրամ)	օր	150000
17.	Առանձին հիվանդասենյակ առանց լոգարանի	օր	4000

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

21.01.2019

X

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ